Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն Ա. Ղ. Քոչարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոց
8-րդ <<Բ>> դասարան
Խառատյան Կարինե Ալեքսանի
2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)- 8-րդ <<Բ>> դասարանում սովորում են 29աշակերտներ,որոնցից 12-ը՝ տղա է,17-ը՝ աղջիկ:2աշակերտներ ներառված են ԿԱՊԿՈՒ ծրագրում:Բոլորն աշխույժ,ակտիվ ,պարտաճանաչ և ծնողների կողմից հատուկ ուշադրության արժանացած երեխաներ են:Միմյանց հանդեպ ուշադիր են և պարտաճանաչ:Աշխատանք է տարվում ամուր հիմքերի վրա դնել դաստիարակչական և կրթական խնդիրները: Հիմնական ուշադրությունը սևեռելու եմ առողջ և ամուր կոլեկտիվի ստեղծմանը:

2.Ուսումնական-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս տարվա ընթացքում-
Դասարանում առողջ և համերաշխ մթնոլորտի պահպանմանը նպաստել,հետևողական լինել թե ուսման որակին ,թե վարքին և կարգապահական հարցերին: Ստեղծել համերաշխ միասնական ընտանիք, որտեղ տիրում են սերն ու համերաշխությունը:Կանխել բացակայությունները (եթե դրանք անհիմն են) և առավոտյան ուշացումները:Դաստիարակել սեր,ուշադրություն,հարազատ դպրոցի,թաղամասի,քաղաքի,հայրենիքի հանդեպ:Դաստիարակչական այս կամ այն խնդիրն իրագործելու համար պետք է ապահովված լինի ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա առողջ հարաբերությունները:
Ակտիվորեն մասնակցել բոլոր միջոցառումներին և հանրօգուտ աշխատանքներին:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1**Հոգևոր դաստիարակություն** –Աշակերտների մեջ հաճախակի զրույցների միջոցով ,զարգացնել և խորացնել հոգևոր դաստիարակությունը : Ճիշտ ուղի ցույց տալ,որպեսզի չներգրավվեն որևէ աղանդի մեջ, ծանոթացնել մեր ժողովրդի հոգևոր արժեքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոց
8-րդ <<Բ>> դասարան
Խառատյան Կարինե Ալեքսանի
2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)- 8-րդ <<Բ>> դասարանում սովորում են 29աշակերտներ,որոնցից 12-ը՝ տղա է,17-ը՝ աղջիկ:2աշակերտներ ներառված են ԿԱՊԿՈՒ ծրագրում:Բոլորն աշխույժ,ակտիվ ,պարտաճանաչ և ծնողների կողմից հատուկ ուշադրության արժանացած երեխաներ են:Միմյանց հանդեպ ուշադիր են և պարտաճանաչ:Աշխատանք է տարվում ամուր հիմքերի վրա դնել դաստիարակչական և կրթական խնդիրները: Հիմնական ուշադրությունը սևեռելու եմ առողջ և ամուր կոլեկտիվի ստեղծմանը:

2.ՈՒսումնական-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս տարվա ընթացքում- Դասարանում առողջ և համերաշխ մթնոլորտի պահպանմանը նպաստել,հետևողական լինել թե ուսման որակին ,թե վարքին և կարգապահական հարցերին: Ստեղծել համերաշխ միասնական ընտանիք, որտեղ տիրում են սերն ու համերաշխությունը:Կանխել բացակայությունները (եթե դրանք անհիմն են) և առավոտյան ուշացումները:Դաստիարակել սեր,ուշադրություն,հարազատ դպրոցի,թաղամասի,քաղաքի,հայրենիքի հանդեպ:Դաստիարակչական այս կամ այն խնդիրն իրագործելու համար պետք է ապահովված լինի ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա առողջ հարաբերությունները:
Ակտիվորեն մասնակցել բոլոր միջոցառումներին և հանրօգուտ աշխատանքներին:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1**Հոգևոր դաստիարակություն** –Աշակերտների մեջ հաճախակի զրույցների միջոցով ,զարգացնել և խորացնել հոգևոր դաստիարակությունը : Ճիշտ ուղի ցույց տալ,որպեսզի չներգրավվեն որևէ աղանդի մեջ, ծանոթացնել մեր ժողովրդի հոգևոր արժեքներին:

3.2Գեղագիտական դաստիարակություն – Դաստիարակել էսթետիկական ճաշակ,գեղեցիկը ընկալելու ունակություններ:Ներկայացնել գեղագիտության տարբեր կատեգորիաներ,ծանոթացնել արվեստի տարբեր ճյուղերին: Այցելել պատկերասրահ,թանգարան, դիտել ներկայացումներ:

3.3Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն – Խորացնել աշակերտների մեջ հայրենասիրության զգացումը,նպաստել,որ նրանք գիտակցեն հայրենիքի և հայ ժողովրդի կարևորությունը:Լինեն զգոն,հայրենասեր,:Այցելել հուշարձաններ:

3.4Ֆիզիկական դաստիարակություն - „Առողջ մարմնում առողջ ոգի„ կարգախոսը դառնա նրանց համար ուղեցույց,կարևորեն սպորտը,կոփված լինելը:
Ճիշտ կազմակերպել օրվա ռեժիմը,պահպանել անձնական հիգիենայի կանոնները: Ընդգծել մաքուր օդում լինելու, ռեժիմով սնվելու կարևորությունը:Հետևողական լինել և սիստեմատիկ ստուգել ֆիզկուլտուրայի դասաժամերին բոլորի ներգրավվածությունը:

3.5Աշխատանքային դաստիարակություն - Դաստիարակել աշխատասիրություն,հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ:Աշակերտներին ներգրավել հանրօգուտ աշխատանքների մեջ,գույքի պահպանման աշխատանքներում և դասասենյակի կահավորման մեջ:

3.6Բնապահպանական դաստիարակություն –Սիրել և պահպանել բնությունը, չաղտոտել այն, մասնակցելշաբաթօրյակներին:Խնամել դպրոցի բակի բույսերը: Մասնակցել բնապահպանական սեմինարներին:Իրենց համարել բնության մի մասնիկն ու բարեկամը:

4.Դպրոց-ընտանիք կապը – Ծնող –ուսուցիչ կապի միջոցով պահպանել դպրոց-ընտանիք կապը:Կազմակերպել ծնողական ժողովներ, տեղյակ պահել դպրոցի հիմնախնդիրներին: Ծողներին մասնակից դարձնել դպրոցական միջոցառումներին:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարողներ
1-ին շաբաթ	Գիտելիքը զանձ է> թեմայի շուր	Սեպտեմբեր	Դասղեկ
2-րդ շաբաթ	Կազմակերպչական հարցեր		Դասղեկ
3-րդ շաբաթ	Ինչ է անկախությունը		Դասղեկ
4-րդ շաբաթ	Ճանաչենք մեր հայրենիքը		Դասղեկ
5-րդ շաբաթ	Ով է իսկական ընկերը	Հոկտեմբեր	Դասղեկ
6 –րդ շաբաթ	Ինչպես եմ օգտագործում իմ ազատ ժամանակը		Դասղեկ

7-րդ շաբաթ	Մեծերը և փոքրերը		Դասդեկ
8-րդ շաբաթ	Ի՞նչ է ազնվությունը		Դասդեկ
9-րդ շաբաթ	Իմ սիրած մասնագիտությունը	Նոյեմբեր	Դասդեկ
10-րդ շաբաթ	Դասարանում առողջ մթնոլորտի ստեղծման նախադրյալները		Դասդեկ
11-րդ շաբաթ	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին...		Դասդեկ

12- րդ շաբաթ	Ես և ուրիշները		Դասդեկ
13-րդ շաբաթ	Աղջիկների և տղաների հարաբերությունների քննարկում:	Դեկտեմբեր	
14- րդ շաբաթ	Մեզ պետք են տարբերություններ		Դասդեկ
15-րդ շաբաթ	Ինչ է կոնֆլիկտը		Դասդեկ,դաստ. գծով փոխտնօրեն
16-րդ շաբաթ	Ամանորյա հուշեր..		Դասդեկ
17-րդ շաբաթ	Մարդիկ , որոնց հանդիպում եմ ամեն օր	Հունվար	Դասդեկ,ուս. գծով փոխտնօրեն
18-րդ շաբաթ	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը		Դասդեկ,պատմ.ուս. ուսուցիչ
19-րդ շաբաթ	Զրույց անձնական հիգիենայիկանոններ պահպանման մասին:		Դասդեկ բուժքույր
20-րդ շաբաթ	Ժպիտը մարդու կյանքում	Փետրվար	Դասդեկ
21-րդ շաբաթ	Մեփական արարքների գնահատում		Դասդեկ
22-րդ շաբաթ	Իմ իրավունքներն ու պարտականությունները դպրոցում		Դասդեկ
23-րդ շաբաթ	Գիրքը մեր կյանքում		Դասդեկ,գրադարանավարուհի
24-րդ շաբաթ	Մայրը սուրբ է....	Մարտ	Դասդեկ
25-րդ շաբաթ	Արդար,ազնիվ ,օրինապահ		Դասդեկ
26-րդ շաբաթ	Համակարգիչը և մարդը:Անվտանգ ինտերնետ		Դասդեկ
27-րդ շաբաթ	Մեր ընտանեկան պարտականությունները	Ապրիլ	Դասդեկ

28-րդ շաբաթ	Վատ սովորություններ։Դրանցից զերծ մնալու կանոնները		Դասղեկ
29-րդ շաբաթ	Հայոց մեծ եղեռնը		Դասղեկ
30-րդ շաբաթ	Ծնողական սեր		Դասղեկ
31-րդ շաբաթ	Մայիս ամիսը, որպես հայ ժողովրդի հաղթանակների ամիս:	Մայիս	Դասղեկ
32-րդ շաբաթ	Ինչ տվեց այս ուսումնական տարին		Դասղեկ
33-րդ շաբաթ	Վերջին զանգի խորհուրդը		Դասղեկ
34-րդ շաբաթ	Էքսկուրսիա		

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը:
Համադպրոցական միջոցառում նվիրված գիտելիքի օրվան:
<Անձնական հիգիենայի կանոնների պահպանում> զրույց
Զրույց ,,Իմ ուսուցիչը
<Դեռահասությունը և վատ սովորությունները> տեսաֆիլմի դիտում
Ամանորյա միջոցառում
Զրույց՝ ,,Մեր հզոր բանակը ,,:
Մայրություն և գեղեցկություն միջոցառում
<Միջառարկայական կապ> տեսադաս
Բնապահպանական արշավ
Այցելություն թանգարան
Էքսկուրսիա

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը
Կազմակերպչական հարցեր	Ծնողներին տեղեկացնել նոր ուս.. տարվա անելիքներին: 3Հիգիենայի կանոնների պահպանում: Այլ հարցեր
Կազմակերպչական հարցեր ՈՒս. տարվա աշխատանքներ:	1.Ծնողական ակտիվի ընտրություն 2.Ծանոթացնել 2022-2023ուստարվա աշխատանքներին
Հիգիենան դպրոցում և տանը	Աշակերտների հագուստի և հիգիենայի պահպանման հարցը
Կազմակերպչական հարցեր	Քննարկել երեխաների վարքը դպրոցում և տանը: Անվտանգ ինտերնետ
Առաջին կիսամյակի ավարտ:	ՈՒս. տարվա առաջադիմության արդյունքների քննարկում:
Երկրորդ կիսամյակի սկիզբ:	Մշակել համատեղ պլան ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ անցկացնելու համար
ՈՒսուցման ընթացքում տեղ գտած թերացումները և համատեղ ուժերով կատարվելիք արդյունավետ աշխա-տանքները:	Ծնողների ներգրավվումը ուսուցման պրոցեսում: Ծնող –դպրոց ամուր կապ
2022-2023ուս. տարվա ավարտը և հետագա անելիքները:	Ծանոթացում ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք աշխատանքներին

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

քննարկվող հարցեր	զրույցի համառոտ բովանդակություն
Աշակերտների առաջադի-մության և վարքի կանոն-ների մասին:	Յուրաքանչյուր ծնող պարտավոր է Հետևողական լինել իր երեխայի առաջադիմության և հիգիենայի հարցում:

Ձևավորել առողջ մթնոլորտ	Երեխաների մեջ ամրապնդել սեր և հարգանք միմյանց նկատմամբ
Ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը	Ապահովել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը և կարևորել այդ կապի անհրաժեշտությունը ուսումնական պրոցեսում:
Ինչպես պահպանել դպրոցական գույքը	Երեխաների մեջ ամրապնդել պատասխանատվություն դպրոցական գույքի նկատմամբ:

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝Միքայելյան Անի
Անդամներ՝ Առաքելյան Անահիտ
Անդամներ՝ Վարդանյան Սիրուշ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

քննարկվող հարցեր	**Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը**
Ակտիվություն ցուցաբերել և համագործակցել դպրոցի հետ:Աշխատանք տանել աշակերտների հիգիենայի և վարքի կանոնների ուղղությամբ:	Ինչպես կազմակերպել համակարգված աշխատանք՝ ի շահ աշակերտների և դպրոցի:
Ծանոթացում դպրոցում կատարվելիք աշխատանքներին	Կարևորել ծնողի ակտիվ մասնակցությունը դպրոցում կատարվելիք աշխատանքներում:

Միջանձնային հարաբերությունների քննարկում	Դաստիարակել փոխադարձ հարգանք և սեր դիմացինի հանդեպ: Լինել ազնիվ ցանկացած հարաբերությունում: Գնահատել դիմացինի արժանիքները:
ՈՒսուցման ընթացքում տեղ գտած թերացումները և համատեղ ուժերով կատարվելիք արդյունավետ աշխատանքները	Ծնողների ներգրավվումը ուսուցման պրոցեսում: